

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/4

7 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց «Ֆիրմա Շուշի» ՍՊԸ 25.03.2015 թ-ի թիվ 3/4 գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 18.03.2015 թ-ի թիվ 1174 որոշման դեմ:

#### **«Ֆիրմա Շուշի» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Իր գործունեության ամբողջ տարիների ընթացքում «Ֆիրմա Շուշի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) զբաղվել է շինարարությամբ և համարվել է ամսական ԱԱՀ վճարող: Աշխատանքային գործունեության ողջ ժամանակաշրջանում ընկերությունը բարեխղճորեն և ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները:

2013 թ-ին ընկերության իրացման շրջանառությունը կրճատվել է՝ չգերազանցելով 100 մլն դրամը, սակայն մեխանիկորեն ընկերությունը շարունակել է 2014 թ-ի համար ներկայացնել ԱԱՀ-ի ամսական հաշվետվություններ և ժամանակին վճարել ԱԱՀ-ի գծով ամսական պարտավորությունները:

Մաշտոցի հարկային տեսչությունն ընդունել է ընկերության կողմից ներկայացված 12 /տասերկու/ ամիսների հաշվետվությունները և միայն 26.02.2015 թ-ին կատարել է կամերալ ուսումնասիրություն, որով հայտնաբերվել և արձանագրվել է անճշտությունը՝ ընկերությանն առաջարկելով ներկայացնել ԱԱՀ-ի եռամսյակային հաշվետվություններ:

Ընկերության կողմից կատարվել է արձանագրության պահանջը և ներկայացվել են 2014 թ-ի 1-ից մինչև 4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկները: Հաշվարկները ներկայացնելուց հետո հարկային տեսչությունը համարել է դրանք սահմանված ժամկետում չներկայացված և հաշվարկել տույժեր ու տուգանքներ: Այսուհետև Մաշտոցի հարկային տեսչության պետի 18.03.2015 թ-ի թիվ 1174 որոշմամբ ընկերությունից գանձման է առաջադրվել ընդամենը 8.596.820 դրամ, որպես ԱԱՀ-ի գծով պարտավորություն:

«Ֆիրմա Շուշի» ՍՊԸ-ն գտնում է, որ ԱԱՀ-ի գծով առաջադրված պարտավորությունը ոչ իրավաչափ է, քանի որ ընկերության կողմից ԱԱՀ-ի ամսական հաշվետվությունների ներկայացումը թյուրիմացության հետևանք է: Գաղտնիք չէ, որ ԱԱՀ-ի ամսական հարկ վճարողները գործում են համեմատաբար ավելի խիստ հարկային ռեժիմում՝ յուրաքանչյուր ամիս ներկայացնելով հաշվետվություններ և յուրաքանչյուր ամիս կատարելով հաշվարկված ամսական ԱԱՀ-ի վճարումներ: Այս պայմաններում եռամսյակային հաշվետվություններ ներկայացնելու փոխարեն ամսական հաշվետվություններ ներկայացնելու համար տույժ ու տուգանքներով ծանրաբեռնելն ընկերությունը համարում է ոչ իրավաչափ, որը չի բխում նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի պահանջներից, որի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտավորություններով կամ մերժել նրանց որևէ

իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Այս առումով ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերությունը ներկայացրել է յուրաքանչյուր ամիս, հաշվարկել ու ամեն ամիս վճարել է հարկերը, ամբողջությամբ կատարել է պետության հանդեպ ԱԱՀ-ի գծով իր պարտավորությունները, դեռ մի բան էլ սահմանված ժամկետից շուտ:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել Մաշտոցի ՀՏ պետի 18.03.2015 թ-ի թիվ 1174 որոշումը և չեղյալ համարել 2014 թ-ի ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկների նկատմամբ Մաշտոցի ՀՏ կողմից հաշվարկված 8.596.820 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորությունը, հաշվի առնելով, որ բովանդակային առումով ընկերությունը ժամանակին կատարել է ԱԱՀ-ի գծով իր վրա դրված պարտավորությունները:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի ՀՏ պետը, քննարկելով «Ֆիրմա Շուշի» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 18.03.2015 թ-ի դրությամբ ընկերության ԱԱՀ-ի գծով չկատարած հարկային պարտավորությունը կազմում է ընդամենը 8.596.820 դրամ, որն առաջացել է 2014 թ-ի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկներից:

Նշվեց նաև, որ «Ֆիրմա Շուշի» ՍՊԸ կողմից 2014 թ-ի հունվար ամսից սկսած հարկային մարմին են ներկայացվել ավելացված արժեքի հարկի ամսական հաշվարկներ: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության 2013 թ-ի իրացման շրջանառությունը չի գերազանցել 100 մլն դրամը, հետևապես ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, պետք է ներկայացվեին ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ:

«Ֆիրմա Շուշի» ՍՊԸ-ում իրականացվել է կամերալ ուսումնասիրություն, որի արդյունքում 06.10.2014 թ-ին և 26.02.2015 թ-ին կազմված արձանագրություններով ընկերությանը հայտնվել է ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր եռամսյակը համարվելու վերաբերյալ:

Կամերալ ուսումնասիրության վերաբերյալ 26.02.2015 թ-ի անագրությունը ստանալուց հետո ընկերությունը 2014 թ-ի համար ներկայացրել է ԱԱՀ-ի եռամսյակային հաշվետվություններ:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի դրույթներով ընկերության կողմից ներկայացված ԱԱՀ-ի ամսական հաշվարկները Մաշտոցի ՀՏ կողմից համարվել են չներկայացված: Արդյունքում, ընկերության նկատմամբ կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցները: 18.03.2015 թ-ի դրությամբ ընկերության պարտավորության ընդհանուր չափը կազմել է 8.596.820 դրամ, այդ թվում՝ ապառք 4.123.410 դրամ, տույժ 538.155 դրամ և տուգանք 3.935.255 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ընկերության կողմից ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընդհակառակը, ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու արդյունքում ընկերության կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերության կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են:


Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ «Ֆիրմա Շուշի» ՍՊԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 18.03.2015 թ-ի թիվ 1174 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

